ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

<< ՁԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/4>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք. Ջարենցավան **07.փետրվարի 2018թ.**

ժամը _12^{00}_

Մասնակցությամբ՝

Հանձնաժողովի նախագահ՝ **Վ. Մարգարյան (ԳՊ/ԳԱՊ)**

Հանձնաժողովի անդամներ՝ **Թ. Պրազյան (ԳՊ/ԳԱ)**

Ս. Բալայան (ԳՊ/ԲԱ)

Հանձնաժողովի քարտուղար՝ **Լ. Վարդանյան (ԳՊ/ՄՀմ)**

1. Տեղեկատվություն մասնակցի ներկայացրած հայտի՝ պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

1.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

2. Տեղեկատվություն հայտ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկի մասին

2.1 Մասնակցի կողմից առաջարկված գնային առաջարկը ներկայացված է PDF ֆայլում,որը կցված է.Առդիր 15 էջ

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

3. << ՁԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/4>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը մի շարք չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին

3.1 Ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետի դրույթներով՝ <<ՁԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/4>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը թիվ 27,44,90 չափաբաժինների մասով հայտարարել չկայացած, քանի որ ոչ մի հայտ չի ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

4. Գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից կատարվելիք գործողությունների մասին

4.1 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝

ա) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերի <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ.

բ) Ծանուցել առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հրավերի գնանշման հարցման հայտը պատրաստելու հրահանգի երրորդ բաժնով նախատեսված փաստաթղթերը.

գ) 4.1 կետի բ) ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրել առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

7. Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի անուն-ազգանունները և ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Վ. Մարգարյան**

(ստորագրությունը)

Հանձնաժողովի անդամներ՝ _____ **Թ. Պրազյան**

(ստորագրությունը)

_____ **Ս. Բալայան**

(ստորագրությունը)

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ **Լ. Վարդանյան**

(ստորագրությունը)